Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 18-ի N 648 - Ն որոշման

# ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

1. Արտակարգ դրության ժամանակ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության հատուկ կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են արտակարգ դրության ժամանակ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը կիրառվում է արտակարգ դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում, եթե առաջանում է հատուկ կարգ կիրառելու անհրաժեշտություն:

3. Սույն կարգը կիրառելու անհրաժեշտությունը կառաջանա, որպես արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցառում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրով սահմանված լինելու դեպքում:

4. Արտակարգ դրության ժամանակ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքը, ձեռքբերումը և շրջանառությունն ապահովում է շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչներից ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի կազմը և աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

5. Հանձնաժողովը էներգոհամակարգի, սննդաարդյունաբերության և բնակչության կենսագործունեությունն ապահովող մյուս բոլոր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպում է արտակարգ դրությանը համապատասխան՝ անհրաժեշտության դեպքում սահմանելով շուրջօրյա աշխատանքային ռեժիմ և վերահսկողություն:

6. Արտակարգ դրության ժամանակ հանձնաժողովն ապահովում է տեղական արտադրության կենսապես կարևորագույն սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների որակի պահպանության վերահսկումը և բնակչության կողմից ձեռքբերման հնարավորությանը համապատասխանող առաջարկի առկայությունը:

7. Հանձնաժողովը որոշում է սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի գինը բնակչության գնողունակությանը համապատասխան:

8. Հանձնաժողովի որոշմամբ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի ծավալները կարող են սահմանափակվել՝ կախված սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների քանակից և անձի համար դրա անհրաժեշտությունից:

9. Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, պահպանության հատուկ ռեժիմ իրականացնելու նպատակով արտակարգ դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և այլ պետական կառավարման մարմինների աշխատողների միջոցով կենսաապահովման օբյեկտներում սահմանում է շուրջօրյա հերթապահություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ